ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ
ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք. Գավառ, Գ. Լուսավորչի փ., 12,
հեռ՝ (0264) 2-34-23, էլ. փոստ՝ info@gavarihamaynqapetaran.am

N Մ-1450
16.06.2026թ.

«ԷԿՈ-ԴԵԿՈՐ» ՍՊԸ
ՏՆՕՐԵՆ
Ա. ԳԱՍՊԱՐՅԱՆԻՆ

(Արարատ, Ա. Խաչատրյան 30,
gnumner2024@mail.ru, հեռ.՝ +37477337513)

ԾԱՆՈՒՑՈՒՄ

Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին

Գավառի համայնքապետարանի և «ԷԿՈ-ԴԵԿՈՐ» ՍՊԸ-ի /այսուհետ՝ Ընկերություն/ միջև 05.05.2026թ. կնքվել է ԳՄԳՀ-ԷԱՃԱՊՁԲ-26/12-1 ծածկագրով Գավառի համայնքապետարանի կարիքների համար ապրանքների մատակարարման գնման պայմանագիր, որի 1.1 կետի համաձայն՝ «Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով /այսուհետ՝ պայմանագիր/ սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով նախատեսված հայտերի բացման և գնահատման նիստի արձանագրությամբ, նույն ընթացակարգի հրավերով սահմանված, պահանջներին համապատասխանող գնահատված ապրանքը /այսուհետ՝ ապրանք/, իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար»:

Ընկերության կողմից չի մատակարարվել պայմանագրի անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագրով պահանջված՝ 2 /երկաթե ժապավեն/, 8 /ճկուն մետաղական խողովակ/, 11 /ճկուն մետաղական խողովակ/ չափաբաժիններով նշված ապրանքները, որի մատակարարման ժամկետն էր սահմանված պայմանագրի ուժի մեջ մտնելու օրվանից հաշված 20 օրացուցային օրը՝ սույն թվականի մայիսի 25-ը ներառյալ:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ «Պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ /կետանցով, ապրանքների,

աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ/ կատարելը»:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 345-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Պարտավորության ուժով մի անձը /պարտապանը/ պարտավոր է մեկ այլ անձի /պարտատիրոջ/ օգտին կատարել որոշակի գործողություն. այն է՝ վճարել դրամ, հանձնել գույք, կատարել աշխատանք, մատուցել ծառայություն և այլն, կամ ձեռնպահ մնալ որոշակի գործողություն կատարելուց, իսկ պարտատերն իրավունք ունի պարտապանից պահանջել կատարելու իր պարտականությունը»:

Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն՝ Պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը /լրիվ կամ մասնակի/, եթե վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 5 օրից ավելի,

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 466-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ «Պայմանագիրը լրիվ կամ մասնակի կատարելուց միակողմանի հրաժարվելու դեպքում, երբ պայամանագրից հրաժարվելը թույլատրվում է օրենքով կամ կողմերի համաձայնությամբ, պայմանագիրը համապատասխանաբար համարվում է լուծված կամ փոփոխված»:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Ընկերությունը խախտել է պայմանագրով սահմանված պարտավորությունները և ղեկավարվելով վերը նշված իրավական հիմքերով Պատվիրատուն միակողմանի լուծում է 05.05.2026թ. ԳՄԳՀ-ԷԱՃԱՊՁԲ-26/12-1 ծածկագրով կնքված պայմանագիրը:

Պատշաճ ծանուցումն ապահովելու նպատակով՝ կկիրառվի ՀՀ Կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» Կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետով սահմանված դրույթները:

«Գնումների մասին» օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու դեպքում, պատվիրատուի ղեկավարի պատճառաբանված որոշման հիման վրա լիազորված մարմինը մասնակցին ներառում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Ընդ որում սույն կետում նշված որոշումը պատվիրատուի ղեկավարը կայացնում է գնման ընթացակարգը չկայացած հայտարարվելու կամ կնքված պայմանագրի վերաբերյալ հայտարարությունը հրապարակելու կամ պայմանագիրը միակողմանի լուծելու մասին հայտարարությունը /ծանուցումը/ հրապարակելու օրվան հաջորդող տասներորդ օրը: Որոշումը կայացվելուն հաջորդող օրը այն գրավոր տրամադրվում է լիազորված մարմնին և մասնակցին: Լիազորված մարմինը

մասնակցին ներառում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում որոշումը ստանալուն հաջորդող քառասուներորդ օրվան հաջորդող հինգերորդ օրը, իսկ որոշումն ստանալուն հաջորդող քառասուներորդ օրվա դրությամբ մասնակցի կողմից որոշման բողոքարկման վերաբերյալ հարուցված և չավարտված դատական գործի առկայության դեպքում՝ տվյալ դատական գործով եզրափակիչ դատական ակտն ուժի մեջ մտնելու օրվան հաջորդող հինգերորդ օրը, եթե դատական քննության արդյունքով որոշման կատարման հնարավորությունը չի վերացել:

Ընդ որում, եթե՝

սույն կետով նախատեսված՝ լիազորված մարմնին որոշումը ներկայացվելու վերջնաժամկետը լրանալու օրվա դրությամբ մասնակիցը կամ պայմանագիրը կնքած անձը վճարել է հայտի, պայմանագրի և (կամ) որակավորման ապահովման գումարը, ապա պատվիրատուն տվյալ մասնակցին ցուցակում ներառելու պատճառաբանված որոշումը չի ներկայացնում լիազորված մարմին.

մասնակցի կամ պայմանագիրը կնքած անձի կողմից հայտի, պայմանագրի և (կամ) որակավորման ապահովման գումարի վճարումն իրականացվել է լիազորված մարմնին որոշումը ներկայացվելու վերջնաժամկետը լրանալուց հետո, բայց ոչ ուշ, քան մասնակցին կամ պայմանագիր կնքած անձին ցուցակում ներառելու վերջնաժամկետը լրանալու օրը, ապա պատվիրատուն դրա մասին գրավոր տեղեկացնում է լիազորված մարմին, որի հիման վրա մասնակիցը չի ներառվում ցուցակում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Գ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

Կատ. Գավառ համայնքի ղեկավարի տեղակալ
Մ. Մովսիսյան
+37494772291